



ԳԱՐԵԿԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՏՐԱՊԵՉՈՆԻ

### Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ե Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Ամենապատիվ Տ. Գրիգոր Աղաջանյան Պատրիարքի Երչաբերականի առիթով:

Բյուզանդական վեճեր հարուցանել չէ երբեք մեր նպատակը: Ազոնցմե շատ Վ տուժած Քրիստոսի Եկեղեցին: Մենք կուղենք ներկայացնել այս Եկեղեցին այնպես՝ ինչպես կզանենք զայն իր աղբյուրին մեջ: Այդ աղբյուրը, այնքան վճիտ, տարակույս չկա, թե ամեն բանե առաջ ԱՎԵՏԱՐԱՆԵ է: Կուղենք մանավանդ մոտենալ այն Ոգիին՝ որ հիմն է հղած, և պարտի մնալ, այդ Եկեղեցիին:

Քրիստոսի Եկեղեցին ընդհանրական է արդարև, զի ան կտարածվի բովանդակ մարդկության վրա. «ԱՍՏՈՒԾՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒ ԹՅՈՒՆ» է այն՝ հաստատված երկրի վրա: Այս թաղավորության ծավալը թիվով չի փոփոխվի, այլ իր սղիով.— «Մի երկնչիք, ՀՕՏ ՓՈՔՐԻԿ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ դարքայութիւն»:

Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին, ըստ այսմ, այն է՝ որ հիմնված է, համաձայն Պետրոս առաքյալի իսկ բացատրության (Ա. Պետ. Բ. 4), աստվածային ՄԻԱԿ «Եկեղանի ՎԵՄ»-ին վրա, «որ թեպետ մաքրոցմն աւազոված է, այլ Աստուծմն ընտրված ու պատվական է»:

Եվ ի՞նչ մեծ անարդանք, արդարև, քան այդ անկյունագուրի պատվական Վեմը փոխանակելը մեկուն հետ այն նույնիսկ կենդանի վեմերուն, վիճաշարերուն,— առաքյալներ, աշակերտներ և հավատացյալներ, որոնցմով կկազմվի «ՀՈԳԵՎՈՐ ՏԱՃԱՐ»՝ իր «անառատ փաճանայութիւնը, մտաուցանելու աստվածամանո հոգևոր պատարագներ՝ Հիսուս Քրիստոսի ձեռնով» (Ա. Պետ. Բ. 5): Եվ այս տաճարներու կամ «հոգևոր տուներ»-ու համադրամարովն է՝ որով Քրիստոս շինած ու ճարտարագետած է իր ընդհանրա-

կան— ԿԱԹՈՂԻԿՆ— Եկեղեցին, իր ԲՈՂՈՐ առաքյալներու ձեռքով ԱՆԽՅԻՐ, ինքն ըլլալով անոր հիմնաքարը, անկյունագուրը:



Եվ Հայաստանյայց Եկեղեցին, բոլոր մյուս Եկեղեցիներուն հետ, մեկն է հղած այդ տաճարներն, փոքր՝ իր տարածութիւնը, այլ մեծ ու փառավոր իր «հոգևոր» արժեքով և բովանդակութիւնը, ի ի եղբայրական քրիստոսաշունչ զգացումներով բոլոր ա՛յլ «հոգևոր տաճարներուն հանդեպ և միշտ բարեմաղթու, որ անոնցմն չպակսի, այլ առավելանա և զորանա աշխարհիկ բնույթի բոլորովին վեր ու դերձ՝ «հոգևոր» բարձր իմաստը և անկեղծ մնա քրիստոնեական իսկական նկարագիրը:

Ա՛յս է ճշմարիտ հավատքի ճշմարիտ դավանանքը, որով բովանդակություն կստանան նաև քրիստոնեական աուրք փորճուրդները, «սուրբ պատարագը» «բարձրագույն քրիստոսագիր իշխանութիւնը», իշխանություն մը՝ որ վեր է և՛ առաքյալներն, և՛ առաքելապետն, և՛ անոնց հաջորդներն, ովքեր որ այ հղած ըլլան անոնք. ան բացարձակ հեղինակությունն է՝ Աստուծո Օծյալի՞ն միայն վերագրելի:

Չմոռնալ, արդարև, որ մարդկային ձեռագործ մը չէ քրիստոնեական ԿԱԹՈՂԻԿԻ Եկեղեցին, «հոգևոր տուններու այդ սքանչիլի համադրությունը, ավետարանական ՄԻՐՈՎ օծուն և «սիրեցէ՛ք զմիմեանս» նշանաբանով բնորոշված:

Վերագրել «ախտությունը» մեկ տաճարի, որ հոգևորին մտ կա մանավանդ «երկրավոր իշխանություն» բանային՝ ոչ անշուշտ Քրիստոս հիմնված, այլ հակառակ «Եկեղեցին»

վեՄ»ին հայտարարած և Պիղատոսն հեզմոր-ված Ճշմարտության, թե՛ Փիլ քագավորու-րյունս չէ այս աշխարհէն», — առնվազն ա-կամա սարթարում մը կարելի է համարել՝ կարեկցարար:

Ոչ մեկ արհամարհանք սքահանայապե-տական (խորհրդատողութիւն, որ կրնա «վսեմ անմտանալի տեսարան» մը եղած ըլլալ շոտմեական Կաթողիկէ Եկեղեցւոյն համար: Բայց ո՞րքան ավելի հրահանգիչ և օրինակելի է առաքելական աքն խորհրդատո-ղութիւն՝ որ տեղի է ունեցած Սրուաղեմի մէջ, Տյառնեղբայր առաքյալի գլխավորութեամբ, և ուր կտիրէր հավասարութեան և համերաշ-խութեան քրիստոնեական բարձր ոգին: ՄԱ-ռաքելապետն» իսկ չէր վարաններ այդ ժողո-ւմին առջև տեղեկարար ըլլալու իր գործու-նեութեանց մասին:

Եվ ինչո՞ւ այդպիսի խորհրդատողութիւն տեղի չունենան այժմ ևս, առանց մեծի ու պզտիկի, գլխավորի և ստորակարգայի խնդիր հարուցանելու և հավատքի Կենդանի Վեմը կապելու անունի մը — Պետրոս — խոր-հրդանիշն կողմ «Լաւր»ին — պետրոս — հետո Յուրաքանչյուր եկեղեցի, իր անփոխանակելի Գույս ունենալով գործիստոս, ունի նաև իր երկրավոր գոյութիւն հանձին իր պետին՝ որ կկրն և պարտի կրել հոգին Գերագույն Գրիսին և կեներկայացնեն ձայնը զինք կազմող հա-վատացյալներուն կամ անդամներուն:

«Հաւատարիմ լինել Աւետարանին», (Ա. Թես. Բ. 4), — այս է էական պայմանը քրիստոնեական հավատքին, որուն Գույսը կամ «Լաւրագոյտան է Քրիստոս (Եբր. ԺԲ. 2), «ՔԱՆՔ ՀՈՎԻՎԸ», և ստոր հավասարադոր ծառաներն են բոլոր սշուղակապետները քրիստոնեական եկեղեցիներուն:



Առաքելոց պաշտոնն էր լինել «օրստող մարդկան», (Մատթ. Գ. 19), ճշմարիտ է-այն տեսութեամբ, սակայն, որ այդ որսոր-դութիւնը պիտի չկատարվիր Քրիստոսի փարսխեն կամ «գալիլի»նեն ներս, այլ անկե դուրս. և այդ որսորդութիւնը պիտի ըլլար «լի կեանո» (Պով. Ե. 10), այսինքն՝ հոգևոր կոչումով կյանքի մը համար, այլ ոչ թե իշ-խանապետական դիտավորութեամբ, հիմնը-վելով «առաքելապետականութեան» մը սխալ ըմբռնված տեսութեան վրա, ինչ որ տեղի կուտայ մարդորսութիւնն սովորական և պախարակված բացատրութեան: Մուտք Եկե-ղեցւոյն գալիթեն ներս, սպառազինված քրիստոնեական — ավետարանական զուտ հավատքով, — այս է կարևորն ու հրամայա-կանը, այն եկեղեցւո՞ր որ խտիր չի դներ, և չի կրնար դնել, ազգերու մէջ, բայց որ չի

զրկեր ազգերը՝ կառավարելու իրենց եկեղե-ցիները, առաջնորդութեամբ Քրիստոսի ոչ-վույն և իր Ավետարանին:

Հավատքը՝ ոչ թե Եկեղեցւոյ պետերուն, այլ Քրիստոսի վրա է հիմնված. հետևարար առաքյալ թե «առաքելապետ» չեն տար մեզի իրավունք իրենց եկեղեցական իշխանութեան մէջ տեսնելու «բարձրագույնը» խոնարհա-գույններն: Տեսանելի եկեղեցիները կառա-վարելու համար անհրաժեշտ չէ, որ այս կամ այն պետը դառնա իշխանապետը բոլոր ե-կեղեցիներուն, Աստուծո կամ Քրիստոսի կամ Պետրոսի կամ որևէ մեկ առաքյալի «իսխանորդ» տիրոսն առնելով իր վրա. մանավանդ «Աստուծո փոխանորդ»:

Առանկալկանութիւնը, որուն վրա շեշտ կղենն բոլոր հիւն եկեղեցիները — ասորակա-նը, հայկականը, հունականն ու հոռմեական-նը — ավելի բարձր տիրոսոս մը չէ քան Լրիստոնեականը, առաջինը՝ առաջալի մը. երկրորդը՝ Քրիստոսի անձին, մանա-վանդ Անոր մեզի բերած հավատքին հետ կապ ունենալով, Եվ քրիստոնեական, հե-տևարար նաև առաքելական են ի հաւատս բոլոր այն եկեղեցիներն անխախտ՝ որոնք ունին Քրիստոսով բերված և առաքյալներով ու անոնց հաջորդներով քարոզված այդ հավատքի լույսն՝ իբրև իրենց առաջնորդ: Այս ըմբռնումով միայն ընդհանրականու-րյունն ալ — կարօյիկեւորյունը — կզտեն իր իմաստն ու արդարացումը:



Այս եկեղեցին, այն՝ «մայր անբաւտ» է այս հավատքով. և այս հավատքն է միայն այն լուսեղեն սանդուխը՝ սորով կըսենք առ Քրիստոս Հայր մեր երկնաւոր:

Եվ ո՞րքան ճիշտ է այն հաստատումը, թե «հնազանդիլ պարտ է Աստուծոյ անուել քան զմարդկան» (Գործք Ե. 29): Եվ առաքյալ-ներն ալ, տարակույս չկա, թե մեզ «մա-նող կարեւո մարդիկ» էին (Գործք ԺԳ. 14), թեև բոլորն ալ Քրիստոսի շունչով տոգոր-ված և Անոր կոչովն իրենց պաշտոնին նվիր-ված:

Արդ, եկեղեցիներն ո՞ր մեկը կարող է հավակնել ըսելու, թե միայն «ինքն ք ժա-ռանգը առաքելական քարոզութեան հոգւոյն», Պողոսյան, և ոչ թե Պետրոսյան, խոսքը — «Լա՛ւր է ինձ կթէ ոչ տնտարանէս» — մեծա-շնորհը նկատելով այս կամ այն առաքյալին լուկ և եւույնիսկ զայն արտասանող Պողոսին: Քրիստոս — ոչ միայն իբրև հիմնադիր, այլ ՀԻՄՆ իսկ Ընդհանրական եկեղեցիին — անխախտ բոլոր առաքյալներուն խոստացալ «զճողին ճշմարտութեան» (Հովհ. ԺԳ. 17), և անոնց կամ այլոց քարոզութեամբ հաստատ-

ված բոլոր եկեղեցիներուն, և ոչ թե անոնցմե մեկին միայն: Եվ իր ներշնչող ներկայութիւնը բոլոր եկեղեցիներուն մեջ է միանգամայն— սես ընդ ձեզ եմք, ոչ թե Ձեզք կամ քեզք.— հավաքականութեան, և ոչ թե անշատաբար մեկուն հետ: Այս ուղիք հասկացողութեան շնորհիվ է, որ Հայաստան-յայց Եկեղեցիի որեւէ զավակ, առանց խրդ-ճահարելու և անարգել կարող է մտնել քրիստոնեական որեւէ եկեղեցի և աղոթել:



Ճիշտ է, որ տեղահանութեանց միջոցին, հալածիչներու կողմից պահ մը փտիք դըր-վեցավ ոչ-հոռմեական և հոռմեական հայե-րու միջև: Եվ սակայն փորձեր նշան զերծ պահելու այդ աղետեն գոնե վերջինները— հոռմեականները,— որոնք ցավով կրսնեք, թե չէին խղճահարիք ըսելու դահիճներուն, թե ամենք հայ շենք, մենք կաթոլիկ ենք, և այլն: Եվ ասիկա վշտառիթ էր երկու տեսա-կետներով. նախ՝ անոր համար, որ այդ ցույց կուտար իրենց ստացած կրոնական դատուհա-րակութեան ոգին՝ որ ազգութաց էր եղած. երկրորդ՝ այն հակաավետարանական անձնասիրութեան համար, որով անոնք՝ փրկելով իրենց անձերը՝ լռելայայն կարգա-րացնեին ի սպանդ վարումն անոնց՝ որոնք ճայ էին, բայց «կարոլիկ» չէին: Հայաստա-յայց Եկեղեցիով զավակ մը այսպես պիտի շփարվեր, ոչ ճեռավոր անցյալին և ոչ ալ ներկայիս մեջ, իրեն ոչ-դավանակից այլ ա-րեանակից եղբայրներու հանդեպ, որոնցմե շատեր նույնքան արիաբար դիմադրավեցին մահվան և նահատակվեցան իսկ, առանց ուրացողութեան որեւէ փորձութեան՝ իրենց ազ-գային ծագման վերաբերմամբ: Եվ կրնանք ըսել, առանց վարանելու, թե ասիկա ար-դյունք է արևոցիւնի՝ զոր Հայաստանյայց Եկեղեցին ներշնչած է ու կենբրնչե, հեռու ճավառածավալական հետին միտքերի:



«Հոռմեական սուրբ Միրանին», «Երկնա-վոր Հոր... Օրոտափառ Փոխանորդին կող-մե շնորհված Հայ-Հոռմեական Պատրիար-քին, թող ներվի մեզ ըսել, թե ամենևին չի վերաբերի մեր Ազգին. այլ կվերաբերի միայն և միայն Հայ-Հոռմեական Եկեղե-ցիին և անոր պատկանող մեր եղբայրնե-րուն. զի Հայաստանյայց Եկեղեցին, որ մեր Ազգային Եկեղեցին է, առանց մերկանալու իր ընդհանրական նկարագրերն՝ կրելով իր մեջ ոգին իսկ ընդհանրականութեան, — չի ճանշնար սուրբ Միրանին: Պարզ ու հա-մեստ սքեմը՝ տարազն է իր բարձրագույն և լսոնարհագույն պաշտոնյաներուն՝ առավել կամ նվազ տարբերութիւններով: Կրնան

սրուր Պայտրոսներու սրտերն ուրախու-թյամբ լեցվածք ըլլալ, ոչ թե Միրանինն հա-մար, այլ իրենց արեանակից եղբայրներու զգացած ուրախութեան մասնակցած ըլլալու: Զաղաքավարական պարտավորութենն թե-լաղրված:

Գարձալ, «ամեն հայ քրիստոնյա» կարող է խոր հարգանք տածել քրիստոնյա Եկեղեց-վո մը Պետին հանդեպ, որպիսիներին մեկն է անտարակույս Հոռմի Քահանայապետը. սակայն ոչ երբեք «խորունկ երախադրիտու-թիւն և հավանութիւն Ա. Քահանայապե-տին համառոտ, բայց համայնապարփակ ճառին համար»:

Հանոր Հայութեան Հոր հանգամանքը չենք տեսներ մենք «Հոռմի Եպիսկոպոսի անձին մեջ, զոր սակայն չենք վարանիր հար-դելու, հարգանքի նույն վերաբերումն ունե-նարով նաև ա՛յլ երկիրներու Եպիսկոպոսնե-րու հանդեպ— «Եպիսկոպոս» լառը կանոններ իր հնազույն իմաստով:

Ամենապարտիվ Տ. Աղաբանյան Արլազան՝ «Պատրիարք Գիլիկիո Հայոց» չէ, այլ առ առավել կիլիկիո հոռմեազավան հայոց: Հա-յաստանյայց Եկեղեցին գիտե իր Կիլիկիո Հայրապետ այն՝ որ կճանչա իր զուպը, Ա-մենայն Հայոց Կաթողիկոսը և կենթարկվի անոր, և որ այժմ Երևի իր տեղահանված Ա-թոռը կրանանի մեջ՝ հԱնթիլիսա:



Թե «Պետրոսի Գահը Հայաստանի և իր ժողովրդայն հանդեպ, քրիստոնեական ա-մենահին օրերեն դարերու ընթացքին մինչև այսօր» ունեցած է անկեղծ ու անշահախըն-դիր «հոգածութիւն և սեր», — մենք դժբախ-տաբար պատմական փաստեր չունինք իսկա-պես: Ընդհակառակը, մենք գիտենք իրական դրդապատճառներն այն բանակցութեանց՝ զորս Կիլիկիան շրջանի մեր կաթողիկոսներ ունեցած են Հոռմի պապերուն հետ, չթերա-նալով քաղաքավարական արտահայտու-թեանց մեջ և երբեմն նույնիսկ՝ գուցե ակա-մա՝ շափազանցելով զանոնք, տեղի տալով ապա ալլընդալլո մեկնութիւններու:

Կիլիկիան-Լուսինյան ժամանակամիջոցը քաղաքական հրահանգիչ ու լուսարանող դասեր ունի մեր ազգային-եկեղեցական պատմու-թեան համար: Ե՛րբ և ո՛վքեր են եղեր այն «Հոռմեական Քահանայապետները»՝ որոնք ամիշտ պաշտպան և փաստաբաններն են հանդիսացեր մեր ազգին՝ «իր ձախողանքնե-րուն և տառապանքներուն մեջ», առանց առաջնորդված ըլլալու Պետրոսի Գահուն, և ոչ թե Քրիստոսի խաչին, շահի մտահոգութենեն, իսկ Հայաստանյայց Եկեղեցիով «պարծառեթ» եղած է միշտ այդ ԽԱԶԸ, որուն հովանիին տակ կընչե ու կապրի ինք և կապրին իր զա-

վակները՝ Չենք քակեր Խաչակիրներու պատմության ներքին ծալքերը, երևան բերելու համար իսկն այդ շարժումին և պարզելու հետևանքները՝ այդ առիթով մեր ժողովուրդին անոնց հետ ունեցած հարաբերությանց, Հերքելի չեն, դժբախտաբար, լատինացումի փոճները մեր երկրի սահմաններն ներս, ուր չհաջողությամբ ժամանակի մը համար թեև, որ սակայն իր հետքերը թողուց, առանց կարենալ այլալիելու Եկեղեցվո հարազատ սղին։

Ճշմարտությունն այն է, սակայն, որ, այո՛, մեր բոլոր ողբերգությունաց մեջ մեր պատմությունը լիքն է մշակութային և վկայաբանական սխրագործություններով, որոնք հատկանշված են ամեկ ցայտուն հանգամանքով, և այն եղած է արիասիրտ հոգեկան կորովը քրիստոնեական հավատքի դավանության և պաշտպանությանը մեջու՝ Եվ այս, շնորհիվ այն ուվիւյն՝ որ եղած է Քրիստոսինը և անկե փոխանցված, ուրիշներու կարգին, նաև Հայաստանյայց Եկեղեցվույն։

Ենորհակալ հնք այն «ՁԻՋՈՒՄԻՆ համար՝ որով Պիոս ԺԲ. Հռոմի պապը կոտոա Եամբողջ հայ ժողովուրդին» իր «առաքելական օրհնությունները»։ Միայն հարգանքով կհիշեցնենք ն. Սրբության, թե «ԱԹՈՒՆ ՀԱՅ-ԿԱԶՆԵԱՅՅՈ՛Մ Մայր Աթոռն է Ս. Էջմիածնի, զոր Քրիստոս ինքն իսկ է հաստատած իր տեսչային իջման շողակաթումով և կենդանի հավատքի Ոսկի Ուտով, և բարեխոսությանը իր սերկնային զօրաց՝ միշտ անշարժ է պահած ցայսօր, և անդրդվելի է մեր պապենական հավատքը, թե պիտի պահե հավիտյան։ Եթե գիտե զայս Հռոմի Գահը, շնորհակալ միայն կրնանք ըլլալ իր Գահակալի օրհնություններուն՝ զորս պարտի տալ որևէ քրիստոնեական եկեղեցվո պետ, ոչ թե զիջողաբար, այլ խոնարհաբար, բոլոր քրիստոնեական աթոռներուն հավասարապես։ Ե՛լ խաճճ ազգաց տիրեն Եոցա, և մեծամեծքն իշխեն Եոցա։ Ո՛չ այնպէս իգէ և ի ձերում միջի...» (Մատթ. Ի. 25—26)։

Եվ Մայր Աթոռը Ս. Էջմիածնի, աղքատացլալ և անտուն Քրիստոսի վայել իր պարզության մեջ, մերթ անշքացլալ՝ արտաքին պատահանց հետևանքով, — ինչպես եղած է երբեմն նաև Պետրոսյան Գահը, — դարերու ընթացքին մնացած է իր անսպառ կենսունակությունամբ, իր հավատքի անտկարանալի զորությունամբ, իր ժառանգած ճշմարտության խոր գիտակցությամբ, կատարելապես համոզված, թե «Ե՛լ ի կենդանաբար, մարմին ինչ ոչ օղնէ» (Հովհ. Զ. 64)։

Մեր հայ-հռոմեական եղբայրներու հմուտ Պատրիարքը՝ Աղաջանյան Սրբազան, գիտն անշուշտ, թե Հռոմա Ս. Գահը չէ, «ուր եղին զվճմե հաւատոյ հիման Ս. Եկեղեցոյ», այլ

նոր Հռոմը, կոստանդնուպոլիս, ուր տեղի է ունեցած 381-ի Տիեզերական Սրկրորդ ժողովը, և ուր, մեր Սահակ Գ. Չորսփորեցի կաթողիկոսի օրով (677—703) Աշոտ իշխանի որդի՝ Մմբատ պատվված է Հուստինիանոս Բ. կայսրեն, Դարսոնքի նորակառույց եկեղեցիին համար անկե ստացած սրբազան մեկ պատվերին առիթով։ Եվ այս դեպքի հիշատակությունն է, որ կըլլա Ս. Խաչի տունին շորեքշաքթի օրվան «Նորոմեա» շարականին մեջ, երգելով. «Կեցո՛ գորդի ծառայի ԲՈ, գորի Հռոմայ զսեղիցն վերապատուեցեր, ուր և ղին զվճմե հաւատոյ հիման սուրբ Եկեղեցոյ»։

Մեր ուղղակից, այլ հռոմեադավան կարդինալ-Պատրիարքը ավաղելով կրսե. «Քանիբանի խմբակցություններ, որ իրենք զիրենք Քրիստոսի Եկեղեցի կհորջորչեն, հրաժարած են պատգամավոր ըլլալի այդ ամբողջական քրիստոնեական հավատքին, որ սակայն անբաժանելի է։ Քանիբնը ղյուլտով և հայթանակի հովեր անեկով անդամ՝ մինչ պարտյայներ են հոգեպես — կհարմարին օրվան իշխողներուն, որ հանուն քաղաքականության կտրնին հիմերը քանդել ամեն կրոնի և աստվածաշուտության։ Քանիբեր, հեկառակ Քրիստոսի պատգամին, Ս. Ավետարանի՝ այդինքն տիեզերական քորոզությունը, մինչև Աստուծո բոլոր ցրվալ որդիները հավաքվին ի մի (Հովհ. ԺԱ. 52), ըլլան մի հոտ և մի հովիվ (Անդ. Ժ. 16), կամփոփվին ազդի մը, պետության մը սեղմ սահմաններու մեջ, կայլափոխեն Եկեղեցվո դերբնական և ղլխավոր նպատակը — որ է հոգիներու սրբությունը և մանադությունը Քրիստոսի երկրիս վրա և հավիտենական երջանկությունը նրկինքի մեջ — աշխարհային, ժամանակավոր, երկրավոր նպատակներու»։

Ակնարկությունները անկուսհելի լին. միշտ ցանկորոված միևնույն սեեռամտածուն մե, թե «Քրիստոսի Եկեղեցին» միայն ու միայն Հռոմեականն է. ան է պատգամավորը «ամբողջական քրիստոնեական հավատքին, որ սակայն անբաժանելի էու Կտենե, որ այդ «քանի-քանի խմբակցությունները — շուգեր իսկ քսել՝ եկեղեցիները — պարտյայներ են հոգեպես», անոր համար, որ անոնք, ընդհակառակը, չեն նկատեր Եկեղեցին աշխարհիկ հաստատություն մը կամ իշխանապետություն մը, և կուզեն հաղթանակ մը տեսնել, այո՛, երբ երեկվան ուրացողները կամ հալածիչները այսօր իմաստությունը կռնենան ճանչնալու Եկեղեցվո այդ զօտ հոգեուր իշխանությունը կամ կոչումը, Ե՛լ աշխարհիկ սահմաններու մեջ, և թումբ ալ կըարձրացնեն սահմանազանցումներու դժուր Հայաստանյայց Եկեղեցին կհարգե, այո՛,

«օրվան իշխողները», երբ անոնք իրենց կարգին կհարգեն Եկեղեցվո այս կոչումը, և մասնավանդ իրենց աշխարհայացքներուն մեջ տեղ կգտնեն սկզբունք մը՝ որ էլայես — թեև ոչ ձևապէս — քրիստոնեական երանգ մը կկրն իր մեջ. սկզբունք մը՝ որ նկատի կունենա բարորութիւնը բոլոր անհատներուն անխորաքար, ստեղծելով տնտեսական դրութիւն մը՝ որ կարող է հետզհետե ինքնասքրբագրութիւններով ընկերային-բարոյական բազմապիսի արատներ — քրիստոնեութեան անունին տակ իսկ ընդհանրացած — մաքրել, ինքն ալ աստիճանաբար զտնելով իր վերջնական հունն ու հանդարտութիւնը: Ան չէ «հարմարած» երբեք և չի հարմարի որ այն բաներուն՝ որոնք «կարգին հիմերը քանդել ամեն կրոնքի և աստվածապաշտութեան», ադոնց դեմ կայաքարի իսկ հողեկան սպառազինութեամբ: Եվ «հողեկան» ոչ թե «պարտալա», այլ հաղթական դուրս եկած է միշտ այդպիսի պայքարներ:

Քրիստոսի Եկեղեցին կհամարու թե հաղթած է Քրիստոս աշխարհի (Հովհ. ԺՁ. 33): Առեւտույթ պարտութիւնները չեն ստեր այդ համարը: Խաչերն ու դերեզմանները պարտութիւններ չեն երբեք: «Իժոխց զբունի» անգամ չեն կարող հաղթահարել Եկեղեցի մը՝ որ կենդանի ճալատիքն, «կենդանաբար հոգի» անխորտակելի ժալոյն մըն է հաստատված. որ ձև ու նյութ չէ, ոչ ալ մարդկային ձեռագործ, այլ գերազանցողիկ գաղափար և աստվածային հիմնարկութիւն: Ինչու, ուրիմն, ըլլանք թերահամար աշխարհի Եկեղեցիի մը ճակատագիրին վերաբերմամբ և չունենանք իմաստութիւնը Գամաղիելի՝ խորհելու իրեն հետ. «բէ ի մարդկանէ իցէ խորհարդ այդ կամ գործը՝ քակտեցի» (Գործք, Ծ. 38): Թե իսկ զտնվին իշխանաւորներ՝ որոնք տքնին «քանդել հիմերը ամեն կրոնքի և աստվածապաշտութեան», կհամարուանք թե. «այս քէ յԱստուծոյ է» Եկեղեցվո կողմն քարոզված «խորհուրդը կամ գործը» չէ կարելի «քակտել զգոսա», և փորձողները «զուրկ աստուածամարտ» պիտի ըլլան: Եվ ո՞վ կարող է մարտնչել Աստուծո հետ, առանց ուշ կամ կանոյս պարտվելու: Մի դուրս վախճողներ տկար են ի համարու և անժույժ ի փորձութիւնս:

Պարտիւք ունենալ, սակայն, իրական վախ մը. Գատարկացում Քրիստոսի ոգիէն և կաշկանդում ձևերու մեջ լոկ: Ճշմարիտ քրիստոնեութիւնը, որ հողի է և լիառատ կյանք, չենք կրնար խորհիլ, թե պիտի ունենա հակետ իր թշնամիները: Չենք կրնար երեսակայել թշնամիներ ևս ի խորհուրդին, բայց պիտի ունենանք թշնամիներ եկեղեցական այնպիսի հաստատութեանց դեմ՝ որոնք թեև երկրպագուներ են ևս, բայց պարտված

են ևս չի խորհուրդէն. Մայրագոյն Սիրո և Եվիուրմի խորհուրդէն, բուն իսկ «աստվածապաշտութեան խորհուրդ» են, որ Եկեղեցին սպառազինող ու պահպանող մեծագոյն ու անհաղթելի զորութիւնն է:

Եվ խորհիլ, թե ամփոփվելով սազգի մը, պետութեան մը սեղմ սահմաններու մեջ կայափոխեն Եկեղեցվո դերեզման և գրկալոր նպատակը՝ «...աշխարհային, ժամանակավոր, երկրավոր նպատակներու», չենթադրեր անտեսում վերև հիշված «զորութեան» և այդ զորութեամբ անված քայլերու արժեքին: Եթե, ո՞վ կարող է արհամարհել ազգ մը, որքան ալ սեղմ եղած ըլլան զայն կատարող պետութեան սահմանները. «մաքանելի հատ» մեջ Աստուծո թագավորութեան խորհուրդը կա. «Խորհիլ ևս» մեջ Աստուծո տիեզերական Սիրո պատկերը կա: Հայաստանայց Եկեղեցվո ամփոփումը, զարեբու ընթացքին և այսօր, իր պաշտած տիեզերական հողիով իր ապրած աշխարհագրական սեղմ սահմաններուն մեջ, չէ այլափոխի իր քրիստոնադոգմ նկարագիրը՝ զոր ազգայնացուցած է, այսինքն՝ յուրաշրջած է, այս կերպով պահելով նաև իր անբաժան միտութիւնը Քրիստոսի Ղեզնաճարական — Կարողիկէ — Եկեղեցիին հետ, համարութիւնը բոլոր քրիստոնեական եկեղեցիներուն: Եթե մեր Եկեղեցին «զերկուրու» ենք խորհած ըլլար, ինչպես կուզե հասկըցնել «Խորհ» Հովտիկանի Գրիչը, դատարկացած պիտի ըլլար հողին, և ինքնին պիտի քայքայվիր: Գարեբու հայածանքներուն տուկացող այս Եկեղեցին, թեև փոքր իր տարածքով և փոքր անուանք մը մեջ տարրացած, չէ նվազ գորավոր քան այլ եկեղեցիներ՝ դիմակայելու նոր փորձութիւններու՝ իր որդեգրած «հողեկան սպառազինութեամբ»:

Այսպես, ոչ թե «այսպէս», կըմբռնենք մեր Ս. Հայրերը, այսպես կըմբռնենք մենք ալ այսօր Քրիստոսի Եկեղեցին. և այս ըմբռնուման արձագանքն է, այո՛, «քաղցրահնչյուն» Ս. Նղիշին խոսքը՝ զոր մեջ կրեեր շրջաբերականը:



Թե սկաթողիկէ կրոնքը — կուզե բուն՝ Հոռմեական Եկեղեցին՝ իրեն սեփականացնելով բոլոր քրիստոնյաներուն պատկանող քրիստոնեական կրոնը — «ոչ մեկ ատեն ուրացած է հայրենիքի և ազգութեան գաղափարականները», — չենք ուզեր կասկածիլ: Միայն չենք մոռնար պատմութեան դասը լեհահայոց վերաբերմամբ... Իսկ Հայաստանայց Եկեղեցին համարատարիմ մնացած զավակներն ոչ մեկը կորսված է: Ոչ մեկուն մեջ ցամքած է իսպառ սերը իր կրոնքին և սերը իր ազգին:

եթե «վասն բազմանալոյ տնօրէնութեան» ցամբած է սէլք քաղմացք, Հայաստանյայց եկեղեցւո զավակներն անոնցմե են՝ որոնք իրենց իսպառ համբերութեամբ ապրած են և կտքնին ապրիլ:

Ամենապատիւ Աղաջանյան Պատրիարք, իր վերջին այցելութեանց առիթով, ցուցաբերած է ազգային զգացումներ, անտարակույս, ուրիշ կերպ ալ չէր կրնար ընել: Մամուլն ևս արձագանքեց զանոնք, չեմ համարձակիր ըսել՝ փողոհարելու մտոք: Մանոթ է նաև ամենուս, թե Պոլսո Սագրզ Աղաճիի Պատրիարքարանը ինքն ալ չմերժեց իր մասնակցութիւնը Հայոց Պատրիարքարանի նախաձեռնութեամբ Պոլսո մեջ տեղի ունեցած ժողովներուն՝ Հայկական Դատի վերաբերմամբ: Միայն լզիտենք, թե ինչու՞ կակնարկվի «Հայ Կաթողիկէ» իմա՝ Հոռմեական Պատրիարքարանի «միջամտութիւններ»ուն, որոնք զշատ անգամ կմնան քողարկված և հեռու փողոհարկելն» իրավունք ունինք այս հայտնութիւնն ալ նկատելու ա՛յլ փողոհարութիւն լզիտեցված բանի մը մասին: Հարկավ օգտակար ալ չէ բանալ պատմութեան բոլոր ծայքերը վերլուծող միտքերու առջև...

Հայտնի է, թե «Հայ Ազգիս և անոր դատին» իրավական տերը, մինչև քաղաքական սեփական տեր մը ունենալը, եղած է միշտ Ամենայն Հայոց Կարողիկոսութիւնը, որուն անունով ալ, առաջին Համաշխարհային պատերազմէն հետո, կազմվեցաւ որոշ Պատգամավորութիւն մը՝ Յուրքահայաստանի դատի պաշտպանութեան համար: Այս պատերազմի ընթացքին իսկ նույն Կաթողիկոսութիւնը կանգնեցաւ ներկա Հայաստանի աշխարհական տիրոջ կողքին՝ կատարել տալով ողջ Հայութեան՝ հայրենասիրական պարտականութիւն, առանց եղծելու Հայաստանյայց Եկեղեցւո քրիստոնեական նկարագիրը:

Ոչ ոք պիտի ուզեր զնահասել Տ. Գրիգոր Աղաջանյան Պատրիարքի փառազր՝ սերթալու Մայր Հայրենիք» իր սրածինը բերելու անոր վերաշինութեան և բարոյական ու կրօնական վերելքին: Բայց գոնե կրօնական մտահոգութիւնը իր կողմէ՝ մենք կգտնենք ավելորդ. դի հայ ժողովուրդը Մայր Հայրենիքի սիրախն մեջ ունի իր կրօնական կեդրոնը, դարավոր Ս. Էջմիածինը, որ կարող է, և պարտի, իր վրա առնել այդ հոգը՝ Հայաստանյայց Եկեղեցւո յունչով ու կանոններով, առանց պետք ունենալու, որ այլազգական Եկեղեցի մը միջամտե իր այդ գործին՝ հավատածավալական առաջադրութիւններով: Նա ունի իր

հավատքը, միս և արյուն եղած, անասան ու ճշմարիտ, կրկնենք՝ ՄԻԱԿ ԿԵՆԴԱՆՈՎ ԷՆՄԻՆ՝ Քրիստոսի վրա հիմնված, և չի կարող իր պետրոսյան փոխանորդութեան, իսկ Հայրենիքի վերաշինութեան համար առաջադրված աշխատանքը կարելի է տանել առանց այդ կրօնական միջնորդութեան: Պատճառ մը չկա, օրինակ, կկարծենք, որ Մխիթարյան հայրեր, Հայաստանյայց Եկեղեցւո ծոցին ծնած Մեծն Մխիթարի այդ ուխտյալ աշակերտները, իրենց զուտ մշակութային աշխատանքները չփոխադրեն հոն, առանց միջամտելու մեր ժողովուրդի կրօնական ու բարոյական դաստիարակութեան գործին:

Միբանավոր Արքազանը, հուսահատական տպավորութեան մը տակ, կգրե նաև հետեւյալ տողերը. «Հայրենադարձի բանբերները և անոնց մունետիկները համազգային այս գործին հաւանականակալ (շեղադրումը մերն է.— Գ. Ե. Տ.) շեշտված բնույթ մը սովին»: Ակնարկութիւնը, անշուշտ, Հայաստանյայց Եկեղեցւոյն համար է, որուն ներքողը հյուսվեցաւ ըստ արժանվոյն ամեն բերանն, ինքն եղած ըլլալով, արդարև, այն միակ Հաստատութիւնը՝ որ զարբերութեանցքին, հավատարիմ իր կոչումին, ոչ միայն եղավ աղբյուր հոգեկան խորազույն ապրումներու և բարձրագույն ներշնչումներու, մարտիրոսագրական փառավոր դրվադներ արձանագրելով եկեղեցական պատմութեան մեջ,— այլև քաղաքական անտանջութեան և վերջին վեցդարյան գերութեան ամենադան սերունն հանդիսացաւ ամրապարիսպ բերդը ազգապահպանման: Եվ այս Եկեղեցին հաւանականակալ չէ երբեք. բառին անդիակալ իմաստով (denomination) որով Ամենապատիւ Կարգիեայ Պատրիարքը կթվի թե փորձութիւնն է ունեցած տեսնելու, այսօր տակավին, «հերձված ժողովութիւնը», եթե ոչ «հերետիկոսութիւնը» Հայաստանյայց Ուլլավառ Եկեղեցւոյն մեջ: Այն՝ Հայաստանյայց Եկեղեցին այն է, ինչ որ է Հոռմեականը, քրիստոնեական կրօնի կամ քրիստոնեական Եկեղեցիի կաթողիկեութեան վերաբերմամբ: Ոչ մեկ «ծիրանի», որքան ալ շողողուն եղած ըլլա այն, կրնա հրքեք նսեմացնել Եկեղեցւո կարողիկեական այս նկարագիրը՝ որ էութիւնն իսկ է նաև մեր Եկեղեցիին: «Թանրեր» թե «մոռնետիկ» Հայաստան աշխարհի և Հայաստանյայց Եկեղեցւո՝ չեն նկատիր անհամեմատութիւն բարձրագույն հոշակելու այս ճշմարտութիւնը, վկայութեամբ անհերքելի փաստերու:



Իրավունք ունի, սակայն, Աղաջանյան Արթուրյան խորհուրդ, թե Հոռոմի Աթոռին հետ հպատակության կապի խզում մը՝ ուրացում մըն է Հոռոմեական Եկեղեցվոյ գերագահության, բայց ոչ երբեք ժողովրդիկ հավատարմութիւն, որ համայն քրիստոնեական է, հետեւաբար նաև Հայաստանյայց Եկեղեցւոյնը:

«Ա. Եկեղեցի», «կաթողիկէ կրօնք», «կաթողիկէ հավատք», — եթե այս բոլորը կընշանակեն քրիստոնեություն, հասկա ի՞նչ են մյուս Եկեղեցիները ոչ-քրիստոնեական, Մեր հայրերը, որ ըսին. «Յայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել...», — ըսին Հոռոմեական Եկեղեցիին, թե Ընդունուած Եկեղեցիին համար, որուն կապտկանի Հոռոմեականին և ուրիշներու հետ նաև մերը: Հայր մեր զսուրբ Աւետարանն գիտեմք, և մայր՝ զառաքելական Եկեղեցի կաթողիկէ» (Եղիշե):

Եվ եթե Հայ Հոռոմեական Եկեղեցին պարտադրված կզգա ինքզինք ատակավին պանդրիստության մեջ մնալու, — Հայաստանյայց Եկեղեցին, ուրախ է, որ իր Աթոռը կմնա միշտ իր սեփական Հայրենիքին մեջ և կընա անոր սահմաններին ներս ու դուրս «անաղարտ» պահել իր սուրբ հավատքը՝ քրիստոնեական կրօնի բուն ակեն առնելով «կենդանի ջուրերը» ամենամաքուր ներշնչումներու:

Տ. Աղաջանյան Պատրիարք, իր շրջաբերականը փակելի առաջ, Ս. Ներսես Շնորհալիի, «Մեր հայրապետներու մեջ են ամենեն հեզին» խոսքերով կողջունե «հավետ Առաքելապետական Ս. Գահը», Գիտե անշուշտ, սակայն, Ն. Ամենպատվոթյունը, թե այդ «մեր» մեր կողմի շեղադրված, կերպա Հայաստանյայց Առաքելական Կաթողիկէ — բայց ոչ Հոռոմեական — Եկեղեցիին, որուն նախանձախնդիր՝ ավանդապահն է մնացած հավետ, բանիվ և դրշով այդ մեծ Հայրապետը: Եվ քերթուողին ստորագրելով մեկտեղ «Ողբ Եղիսիոյ» ողբերգի մեջբերված տողերը, չէ մտաբերած բնավ, իր կյանքի բովանդակ բնթացքին, նույն տողերու ծիրանավորված իմաստով ողջունելով Հոռոմի «Առաքելապետական Գահը», Պետրոսն կամ անոր հաջորդներն սպասելով կրկնքի բացումը նաև Հայաստանյայց Եկեղեցվոյ զավակներուն առջև:

Չխոռովենք հանգիստը մեր ի Քրիստոս ննջող սուրբերուն, որոնք, ըստ հանձնարարության արևորության անոթն առաքյալին, նայեցան և միայն ու միայն, «ի Զօրագրութիւն հաւատոց և ի կատարիչն՝ ՅԻՍՈՒՍ» (Եբր. ԺԲ. 2):

(Արտատպված Կիլիկիո Կաթողիկոսութեան պաշտօնաբեր «ՀԱՄԿ» ամսագրի 1950 թվի դեկտեմբերի համարից):

